ՀԱՅ ՌԱԶՄԻԿՆԵՐԸ ԲՐԱՏԻՍԼԱՎԱՅԻ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՄԱՐՏԵՐՈՒՄ (25 մարտ—4 ապրիլ, 1945 թ.)

Կ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1945 թ. գարնան սկզբներին Երկրորդ Ուկրաինական ռազմաճակատի առջև խնդիր էր դրված ազատագրել Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավան, այնուհետև հակառակորդին դուրս շպրտել նաև Մորավիայի կենտրոն Բռնոյից։ Բրատիսլավայի ազատագրումով բացվում էին Վիեննա տանող ճանապարհները։ Ֆաշիստները Բրատիսլավայի մատույցները փակել էին բազմաթիվ դոտերով և դզոտներով, հակատանկային փոսերով, ականադաշտերով ու լարափակոցներով։ Քաղաք տանող բոլոր ուղիները ծածկված էին արգելապատնեշներով ու երկաթբետոնե ցցերով, փողոցներում կառուցվել էին բարիկադներ, հակատանկային և հակահետևակային զանազան արգելափակոցներ։ Ամրացված էին Բրատիսլավայի հատկապես ծայրամասերը, որտեղ, բացի արհեստական ամրություններից, օգտագործվել էին քաղաքի հյուսիսային մասով ձգվող Փոքր Կարպատյան լեռները և հարավային մասով հոսող Փոքր և Մեծ Դանուբ գետերը։ Մինչև Բրատիսլավա հասնելը սովետական զորքերը պետք է հաղթահարեին նաև Գրոն, Ժիտավա, Նիտրա և Վագ գետերը։

Նախապատրաստական աշխատանքներից հետո Երկրորդ Ուկրաինական ռազմաճակատի 7-րդ գվարդիական բանակի զորքերը 1945 թ. մարտի 25-ին անցան հարձակման։ Դաժան մարտեր տեղի ունեցան հատկապես Գրոնի գետանցման ժամանակ։ Հակառակորդը կատաղի դիմադրություն էր ցույց տալիս, փորձելով ամեն գնով խանգարել սովետական զորքերի գետանցումը։ Սակայն 7-րդ բանակի հարվածային խմբերին հաջողվեց տեղ-տեղ հաղթահարել Գրոնը և նրա արևմտյան ափին հենակետեր ստեղծել[1]։ Մարտի 26—27-ը 7-րդ բանակի զորամասերը գետանցեցին Գրոնը, շարժվեցին դեպի Բրատիսլավա՝ ճանապարհին հաղթահարելով շրային մյուս արգելքները ևս։ Օդից նրանց անգնահատելի օգնություն ցույց տվեց 5-րդ օդային բանակը։ Ապրիլի 1-ին 7-րդ գվարդիական բանակի առաջապահ զորամասերը դուրս եկան Բրատիսլավայի մատույցները և ընթացքից գրոհեցին նրա ամրությունները։ Նրանց աջակցում էին նաև Դանուբյան գետային ռազմական նավատորմիղի զրահակատերները։ Փոքր Կարպատների շրջանում հաջողությամբ էին գործում 1-ին գվարդիական հեծյալ-մեքենայացված խմբի 4-րդ և 6-րդ գվարդիական հեծյալ կորպուսները։ Նրանք ապրիլի 1-ին գրավեցին Բրատիսլավայից հյուսիս-արևմուտք գտնվող Տռնավա քաղաքը և շրջապատման սպառնալիք ստեղծեցին Փոքր Կարպատներում ամրացած հակառակորդի համար։ Օգտագործելով հեծ-

---

1 ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության արխիվ (այսուհետև՝ ՍՍՀՄ ՊՄԱ), 7-րդ գվարդիական բանակի ֆոնդ, ց. 5312, գ. 979, թ. 4։

յալ կորպուսների հաջողությունը, գվարդիականներին հաջողվեց ապրիլի 2-ին կոտրել թշնամու դիմադրությունը և նրան ցած շպրտել Փոքր Կարպատների անտառածածկ լանջերին ստեղծած պաշտպանական ամրություններից։ Նույն օրը բանակի 25-րդ հրաձգային կորպուսի առաջապահ զորամասերը, հաղթահարելով հակառակորդի 3 շարք խրամատներից բաղկացած և բազմաթիվ հրետանային-գնդացրային կրակակետեր ունեցող պաշտպանության արտաքին եզրագիծը, մարտեր սկսեցին քաղաքի ազատագրման համար։ Համառ պայքար սկսվեց յուրաքանչյուր թաղամասի, փողոցի և տան համար։ Առաջինը քաղաք ներխուժեցին գեներալ-մայոր Ե. Պ. Գրեչանու 409-րդ հրաձգային և գնդապետ Ն. Վ. Երյոմինի 4-րդ գվարդիական օդա-դեսանտային դիվիզիաների զորամասերը։ Այնուհետև, քաղաքի արևելյան շրջանից Բրատիսլավա մտան 23-րդ հրաձգային կորպուսի 25-րդ գվարդիական (հրամանատար՝ գնդապետ Ա. Մ. Պերեմանով) և 252-րդ հրաձգային (հրամանատար՝ գեներալ-մայոր Ի. Ա. Գորբաչով) դիվիզիաները։ Դանուբի հյուսիսային ափով առաջ էր շարժվում նույն կորպուսի 19-րդ հրաձգային դիվիզիան (հրամանատար՝ գնդապետ Ս. Վ. Սալիչև), որին ակտիվ աջակցում էր Դանուբյան ռազմական նավատորմիղի գետային նավերի 2-րդ բրիգադը (հրամանատար՝ 2-րդ կարգի կապիտան Ա. Ֆ. Արժավկին)։ Չդիմանալով սովետական զորքերի ճնշմանը, ապրիլի 4-ի երեկոյան հակառակորդը դադարեցրեց դիմադրությունը և նահանջեց Վիեննայի ուղղությամբ։ Սլովակիայի մայրաքաղաք և արդյունաբերական, վարչական ու ճանապարհային կարևոր հանգույց Բրատիսլավան ազատագրվեց ֆաշիստական օկուպացիայից։ Քաղաքի բնակչությունը ցնծությամբ և խանդավառությամբ դիմավորեց իր ազատարարներին[2]։

Բրատիսլավայի ազատագրության համար մղված մարտերում աչքի ընկած զորամասերի կազմում մեր բազմազգ հայրենիքի մյուս ժողովուրդների և ազգությունների ներկայացուցիչների հետ ուս-ուսի մարտնչեցին նաև հայ ժողովրդի զավակները։ Նրանցից շատերը մարտերում ցուցաբերած խիզախության ու արիության համար արժանացան կառավարական բազմաթիվ պարգևների, իսկ շատերն էլ այդ հերոսական կռիվներում իրենց կյանքը զոհեցին հանուն եղբայրական սլովակ ժողովրդի ազատության։

Հայ ռազմիկների զգալի մասը այդ մարտերին մասնակցել է 7-րդ գվարդիական բանակի 25-րդ հրաձգային կորպուսի 409-րդ հրաձգային դիվիզիայի կազմում[3]։

---

[2] «За освобождение Чехословакии», М., 1965, стр. 194; «Освобождение Юго-Восточной и Центральной Европы войсками II-го и III-го Украинских фронтов 1944—1945», М., 1970, стр. 560, 658.

[3] Այդ դիվիզիան ձևավորվել էր Սովետական Հայաստանում՝ 1941 թ. օգոստոսին։ 1942 թ. փետրվարին այն վերակազմավորվել է որպես հայկական ազգային միավորում, իսկ դեկտեմբերին փոխադրվել ռազմաճակատ։ Առաջին մարտերին դիվիզիան մասնակցել է Մոզդոկի շրջանում, որտեղից նրա մարտական ուղին ձգվել է Թաման, Միլերովո, Աչափնյա Ուկրաինա, Ռումինիա, Հունգարիա, Չեխոսլովակիա և Ավստրիա։ Գերմանա-ֆաշիստական զորքերին հասցրած զգալի կորուստների և մարտերում ցուցաբերած արիության համար դիվիզիան պարգևատրվել է Բոգդան Խմելնիցկու շքանշանով, ինչպես նաև արժանացել Կիրովոգրադյան պատվավոր անվանման (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Հ. Հարությունյան, Հ. Գ. Հովհաննիսյան, 409-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին («Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 1, էջ 7—40)։

1945 թ. մարտի 25-ի առավոտյան դիվիզիայի զորամասերը Դարմոտկի բնակավայրի մոտ հաջողությամբ կատարելով Գրոնի գետանցումը, հակառակորդին դուրս շպրտեցին գետի արևմտյան ափին գտնվող Բինյա և Ցատա գյուղերից[4]։ Այնուհետև, զարգացնելով ձեռք բերած հաջողությունը, նրանք շարունակեցին թշնամու հետապնդումը և հաղթահարելով Նիտրա և Վազ գետերը, ապրիլի 1-ին գրավեցին Բրատիսլավայից հյուսիս-արևելք գտնվող Սենեց քաղաքը։ Երկաթգծի ուղղությամբ շարունակելով առաջխաղացումը, դիվիզիայի զորամասերը հաջորդ օրը գրավեցին Իվանկա, Ֆառնա և Վայնորի կայարանները, ինչպես նաև Բրատիսլավայի արևելյան արվարձանը[5]։ Ապրիլի 5-ին դիվիզիայի զորամասերը փողոցային կատաղի մարտեր էին մղում քաղաքի 7-րդ թաղամասի համար։ Մինչև կեսօր այն մաքրվեց ֆաշիստներից։ Վերջիններիս ձեռնարկած մի քանի հուսահատական հակագրոհներն ապարդյուն անցան։ Երեկոյան դեմ թեժ մարտեր բորբոքվեցին 1—4-րդ թաղամասերում[6]։ Առավոտյան մարտերը շարունակվում էին նույն թափով։ Միայն կեսօրից հետո դրանք սկսեցին թուլանալ, իսկ օրվա վերջում հակառակորդը լրիվ դադարեցրեց դիմադրությունը։ Դիվիզիայի զորամասերը կրնկակոխ հետապնդեցին թշնամուն և նրան քշեցին Մորավա գետի աջ ափը[7]։

Գերագույն գլխավոր հրամանատարի 1945 թ. ապրիլի 4-ի № 330 հրամանով շնորհակալություն հայտնվեց Բրատիսլավայի գրավման ժամանակ առավել աչքի ընկած զորամիավորումներին, այդ թվում նաև 409-րդ հրաձգային դիվիզիային[8]։ Սլովակիայի մայրաքաղաքի ազատագրման գործում ակտիվ դեր խաղալու համար դիվիզիային շնորհվեց Բրատիսլավյան պատվավոր անվանում։ Դիվիզիայի հարյուրավոր զինվորներ ու սպաներ քաղաքի համար մղված մարտերում ցուցաբերած արիության ու քաջության համար պարգևատրվեցին շքանշաններով և մեդալներով։ Նրանցից էր 677-րդ հրաձգային գնդի 2-րդ հրաձգային գումարտակի հրամանատար, մայոր Ռ. Ա. Հովսեփյանը։ Նրա գումարտակը առաջիններից մեկը հաղթահարեց Գրոնը և հենակետ գրավեց Ցատա գյուղի շրջանում։ Կերտ կայարանի գրավման ժամանակ գումարտակը ոչնչացրեց հակառակորդի 30 զինվոր ու սպա, գերեց 40 հոգի։ Գումարտակը աչքի ընկավ նաև Բրատիսլավայում տեղի ունեցած փողոցային մարտերում՝ ոչնչացնելով շուրջ 200 հիտլերականի, շարքից հանելով 10 գնդացրային կետ, գրավելով մի քանի թաղամաս։ Այդ բոլորի համար գումարտակի տասնյակ զինվորներ արժանացան կառավարական զանազան պարգևների, իսկ նրանց հրամանատարը՝ Կարմիր դրոշի շքանշանի[9]։ Այդ մարտերում աչքի ընկան նաև նույն գնդի ավտոմատավորների վաշտի դասակի հրամանատար, ավագ սերժանտ Ա. Ա. Սողոմոնյանը և կապի վաշտի ջոկի հրամանատար, ավագ սերժանտ Վ. Ե. Հովհաննիսյանը։ Նրանցից առաջինը հատկապես աչքի ընկավ ապրիլի 3-ին՝ թաղամասերից մեկի գրավման ժամանակ։ Անկյունային շենքի պատուհանից տեղացող գնդացրային կրակը գետին էր գամել

---

4 ՍՍՀՄ ՊՄԱ, 409-րդ հրաձգային դիվիզիայի ֆոնդ, ց. 484453, գ. 1, թ. 34։
5 Նույն տեղում, 7-րդ գվարդիական բանակի ֆոնդ, ց. 5312, գ. 279, թ. 19։
6 Նույն տեղում, գ. 979, թ. 26։
7 ՍՍՀՄ ՊՄԱ, 409-րդ հրաձգային դիվիզիայի ֆոնդ, ց. 484453, գ. 1, թ. 34։
8 Նույն տեղում, 7-րդ գվարդիական բանակի ֆոնդ, ց. 5312, գ. 979, թ. 36։
9 Նույն տեղում, ֆ. 33, ց. 690306, գ. 330, թ. 352։

Ա. Ա. Սողոմոնյանի դասակին։ Հրամանատարը աննկատելի սողալով անցավ շենքի ետնամուտքը և ճարպկությամբ բարձրանալով երկրորդ հարկ՝ գերեց գնդացրորդին։ Դա դասակին հնարավորություն տվեց գրավել թաղամասը։ Այդ նույն ժամանակ գրոհող ստորաբաժանումների և գնդի շտաբի միջև անխափան կապ էին ապահովում Վ. Ե. Հովհաննիսյանի ղեկավարած կապավորները։ Վտանգելով կյանքը, Վ. Ե. Հովհաննիսյանը վերացրեց հեռախոսագծի խաթարման 20 դեպք։ Մարտերում ցուցաբերած քաջության համար ավագ սերժանտներ Ա. Ա. Սողոմոնյանը և Վ. Ե. Հովհաննիսյանը պարգևատրվեցին Արիության համար մեդալներով[10]։

Քաջաբար էին կռվում նաև 675 և 684-րդ հրաձգային գնդերի մարտիկները։ Գրոնի գետանցման ժամանակ 684-րդ գնդի 1-ին հրաձգային գումարտակի կուսակազմակերպիչ, կրտսեր լեյտենանտ Ա. Ս. Զատիկյանը առաջինն անցավ դետի աջ ափը և ձեռնամարտի բռնվեց թշնամու հետ։ Մարտիկները հետևեցին նրան, և հիտլերականները փախուստի դիմեցին։ Հենակետը գրավվեց, բայց այդ մարտում Ա. Ս. Զատիկյանը քաջի մահով զոհվեց։ Նման հերոսություն գործեց նաև 675-րդ հրաձգային գնդի 1-ին հրաձգային գումարտակի կուսակազմակերպիչ, սերժանտ Ա. Ս. Վարդապետյանը։ Ապրիլի 2-ին գումարտակը մարտական առաջադրանք էր ստացել հակառակորդին դուրս շպրտել Վայնորի կայարանի և դինամիտի գործարանի շրջաններից։ Գրոհի անցած մարտիկների ճանապարհը փակեց թշնամու դզոտից տեղացող գնդացրային կրակը։ Առաջին շարքերը մի պահ երերացին և փորձեցին ընկրկել։ Այդ նկատելով՝ Ա. Ս. Վարդապետյանը «Հանուն հայրենիքի՝ իմ ետևից» կոչով առաջ նետվեց և նռնակով ոչնչացրեց դզոտը։ Կայարանն ու դինամիտի գործարանը դրավվեցին, բայց սերժանտ Ա. Ս. Վարդապետյանը քաջաբար զոհվեց։ 7-րդ դվարդիական բանակի հրամանատարությունը բարձր գնահատելով Ա. Ս. Վարդապետյանի և Ա. Ս. Զատիկյանի անձնազոհությունը՝ հետմահու նրանց պարգևատրեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով[11]։

Քաղաքի ազատագրման մարտերում հերոսաբար էին գործում նաև 964-րդ հրետանային գնդի հրետանավորները։ Նրանք հատկապես կարևոր դեր խաղացին գետային արգելքների հաղթահարման ժամանակ հետևակին աջակցելու և հակառակորդի պաշտպանական ամրություններն ավերելու գործում։

Գնդի շտաբի աշխատանքները գերազանց ղեկավարելու համար Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվեց շտաբի պետ, կապիտան Ա. Ա. Քարամյանը[12]։ Փողոցային մարտերում ցուցաբերած խիզախության համար Փառքի 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվեց հրետգնդի 6-րդ մարտկոցի նշանառու, կրտսեր սերժանտ Ա. Կ. Դանիելյանը։ Միայն ապրիլի 3-ին խիզախ հրետանավորի դիպուկ կրակով ոչնչացվեց հակառակորդի 2 գնդացրային կետ՝ անձնակազմի հետ միասին, 105 մմ մեկ հաուբից, մասամբ ոչնչացվեց մեկ վաշտի չափ հետևակ[13]։

Ապրիլի 3-ի մարտերում աչքի ընկավ նաև դիվիզիայի հրետանու շտաբի պետի օգնական, կապիտան Վ. Հ. Նարինյանը, որը ղեկավարում էր հակառա-

10 ՍՍՀՄ ՊՄԱ, 409-րդ հրաձգային դիվիզիայի ֆոնդ, ց. 484454, գ. 45, թթ. 562, 579։
11 ՍՍՀՄ ՊՄԱ, ֆ. 33, ց. 690306, գ. 504, թթ. 110—111։
12 Նույն տեղում, գ. 2954, թ. 141։
13 Նույն տեղում, թ. 175։

կորդի կրակակետերը կործանող ուղիղ նշանառության հրանոթների խումբը։ Մեկ օրվա ընթացքում Վ. Հ. Նարինյանի ղեկավարած հրետանավորները ոչնչացրեցին հակառակորդի 4 դզոտ, շենքերի տարբեր հարկերում թաքնված 3 գնդացրային կետ, 1 հակատանկային հրանոթ և շուրջ 40 հիտլերական։ Մարտական առաջադրանքը գերազանց կատարելու համար Վ. Հ. Նարինյանը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[14]։ Կարմիր աստղի շքանշանով պարգևատրվեց նաև 682-րդ առանձին սակրային գումարտակի սակրավոր, եֆրեյտոր Ա. Ս. Թորոսյանը, որը հակառակորդի տեղատարափ կրակի տակ վնասազերծեց հակատանկային 60 ական և ճանապարհ բացեց գրոհող ստորաբաժանումների համար[15]։

Արիաբար էր գործում գինարհեստանոցի պետ, ավագ տեխնիկ-լեյտենանտ Ա. Հ. Բարսեղյանը, որը կյանքը վտանգի ենթարկելով հենց կրակային դիրքերում վերանորոգեց 5 հրանոթ և 7 գնդացիր։ Նա պարգևատրվեց Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով[16]։ Նույնպիսի շքանշանով պարգևատրվեց նաև տրանսպորտային վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Բ. Ս. Հարությունյանը[17]։

Անձնազոհ էին գործում 344-րդ առանձին ավտովաշտի վարորդները՝ ավագ տեխնիկ-լեյտենանտ Մ. Պատրիկյանի հրամանատարությամբ։ Աշխատելով գիշեր-ցերեկ, նրանք հակառակորդի կրակի տակ առաջավոր դիրքեր էին փոխադրում զենք ու զինամթերք, իսկ վիրավորներին՝ թիկունք։ Վարորդներ Ա. Գ. Թութունջյանը, Մ. Կ. Դոլոզյանը, Տ. Հ. Սուքիասյանը և 486-րդ առանձին բուժսանգումարտակի վարորդ Կ. Մ. Խուդավերդյանն արժանացան Արիության համար և Մարտական ծառայության համար մեդալների[18]։

Բրատիսլավայի ազատագրության համար մղված մարտերին բազմաթիվ հայ ռազմիկներ մասնակցեցին նաև 7-րդ գվարդիական բանակի այլ զորամիավորումների կազմում։

Բրատիսլավայի համար մղված մարտերում հերոսաբար էր կռվում 25-րդ գվարդիական հրաձգային դիվիզիան, որն արժանացավ Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշանի։ Այդ դիվիզիայի հրետանու շտաբի պետն էր գվարդիայի մայոր Հ. Ռ. Ոսկանյանը, որն այդ օրերին կատարում էր նաև դիվիզիայի հրետանու պետի պարտականությունները։ Հրետանավորները միայն Բրատիսլավայի պատերի տակ ոչնչացրեցին հակառակորդի 8 տանկ ու զրահատրանսպորտյոր, հրետանային ու ականանետային 3 մարտկոց, հակատանկային 9 հրանոթ, 75 գնդացիր, 18 ավտոմեքենա, 16 դզոտ, շարքից հանեցին ավելի քան 1120 հիտլերականի։ Հրետանու աշխատանքը գերազանց ղեկավարելու համար Հ. Ռ. Ոսկանյանը պարգևատրվեց Ալեքսանդր Նևսկու շքանշանով[19]։ Նույն դիվիզիայի 53-րդ գվարդիական հրետանային գնդի դիվիզիոնի հրամանատար, գվարդիայի մայոր Վ. Հ. Աղաջանովը դիվիզիոնի մարտական գոր-

---

14 Նույն տեղում, ղ. 504, թ. 319։

15 Նույն տեղում, 409-րդ հրաձգային դիվիզիայի ֆոնդ, ց. 484453, գ. 45, թ. 481։

16 Նույն տեղում, ֆ. 33, ց. 690306, գ. 504, թ. 301։

17 Նույն տեղում, թ. 121։

18 Նույն տեղում, 409-րդ հրաձգային դիվիզիայի ֆոնդ, ց. 484453, գ. 45, թթ. 580—595։

19 Նույն տեղում, ֆ. 33, ց. 690306, գ. 3172, թ. 335։

ծողությունները գերազանց ղեկավարելու համար պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[20]։

Քաղաքի ազատագրության գործում կարևոր դեր խաղալու համար Կարմիր դրոշի շքանշանի արժանացավ 19-րդ հրաձգային դիվիզիան։ Դանուբը դետանցելիս հատկապես աչքի ընկավ այդ միավորման 32-րդ հրաձգային գնդի 1-ին հրաձգային գումարտակի կուսակազմակերպիչ, կրտսեր լեյտենանտ Պ. Ա. Աբրահամյանը։ Մարտի 29-ի լույս 30-ի գիշերը 7 հոգուց բաղկացած մի խումբ նրա ղեկավարությամբ անաղմուկ հաղթահարեց Դանուբը և սողալով մոտեցավ հակառակորդի առաջապահ դիրքերին։ Երբ մնացել էր մի քանի մետր, թշնամին նկատեց խիզախներին։ Ե՛վ յոթնյակին, և՛ գետանցող մյուս խմբերին ոչնչացում էր սպառնում։ Դրությունը փրկեց Պ. Ա. Աբրահամյանը, որը ոչնչացրեց թշնամական կրակակետերը։ Այնուհետև, միանալով դետանցում կատարած խմբերին նա մասնակցեց հակառակորդի պաշտպանական երկրորդ բնագծի ճեղքմանը և Զլատնա նա Օստրովե գյուղի ազատագրմանը։ Ցուցաբերած խիզախության համար Պ. Ա. Աբրահամյանը ներկայացվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանի։ Սակայն նրան բախտ չվիճակվեց ստանալու պարգևը։ Ապրիլի 3-ին, փողոցային մարտերից մեկում նա քաջի մահով զոհվեց[21]։

Բրատիսլավայի ազատագրման ժամանակ աչքի ընկավ նաև 93-րդ գվարդիական հրաձգային դիվիզիան և արժանացավ Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանի։ Այդ դիվիզիայի 285-րդ գվարդիական հրաձգային գնդի կապի վաշտում էր ծառայում շարքային Ա. Հ. Հարությունյանը։ Մարտի 24-ի լույս 25-ի գիշերը նա հեռախոսալարի փաթեթն ու ապարատը ձեռքին անցավ Գրոնի արևմտյան ափը և հուսալի կապ ստեղծեց հենակետ գրաված ստորաբաժանման ու գնդի շտաբի միջև։ Այդ գիշերը նա մի քանի անգամ լողալով անցավ գետը և վերականգնեց խաթարված հեռախոսագիծը։ Ա. Հ. Հարությունյանն ապրիլի 2—4-ը տեղի ունեցած փողոցային մարտերում կրակի տակ 56 անգամ վերականգնեց խաթարված հեռախոսակապը։ Մարտական առաջադրանքները գերազանց կատարելու և ցուցաբերած քաջության համար գվարդիայի շարքային Ա. Հ. Հարությունյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[22]։

Նույն դիվիզիայի 281-րդ գվարդիական հրաձգային գնդի 120 մմ ականանետային մարտկոցի հետախույզ, գվարդիայի սերժանտ Ռ. Ս. Վարդանյանը Գրոնի աջ ափից ճշտում էր մարտկոցի կրակը։ Նրա հաղորդած տվյալներով միայն մարտի 25-ին ոչնչացվեց հակառակորդի 4 գնդացրային կետ և ականանետային 1 մարտկոց, որոնք խանգարում էին գետանցում կատարող զորքերին։ Հերթական հետախուզություն կատարելիս նա գերեց գերմանական 1 եֆրեյտորի և բերեց շտաբ։ Ցուցաբերած արիության համար անվախ հետախույզը պարգևատրվեց Փառքի 2-րդ աստիճանի շքանշանով[23]։

Մարտերում ցուցաբերած արիության համար Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվեց այդ դիվիզիայի 198-րդ գվար-

---

20 Նույն տեղում, 7-րդ գվարդիական բանակի ֆոնդ, ց. 5339, գ. 162, թ. 158։

21 Նույն տեղում, ֆ. 33, ց. 686196, գ. 138, թ. 78։

22 Նույն տեղում, ց. 690306, գ. 127, թ. 64։

23 Նույն տեղում, գ. 3466, թ. 398։

դիական հրետանային գնդի դիվիզիոնի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, գվարդիայի կապիտան Մ. Խ. Պիշտոկչյանը[24]։

Սլովակիայի մայրաքաղաքի ազատագրության ժամանակ հերոսաբար կռվեց նաև 252-րդ հրաձգային դիվիզիան, որն արժանացավ Բրատիսլավյան պատվավոր անվանման։ Դիվիզիան հատկապես հաջողությամբ էր հաղթահարում ջրային արգելքները։ Դրանում իր արժանի լուման ուներ դիվիզիայի ինժեներ, մայոր Պ. Հ. Կարաբեկովը։ Նրա ղեկավարությամբ անցարանների կառուցման աշխատանքները միշտ էլ ավարտվել են ժամանակին և զորամասերին հնարավորություն տվել հաջողությամբ հաղթահարելու արգելքները։ Դանուբ և Փոքր Դանուբ գետերի վրայով անցարանների կառուցումը գերազանց կազմակերպելու համար Պ. Հ. Կարաբեկովը պարգևատրվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով[25]։

Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվեց նաև 4-րդ գվարդիական օդա-դեսանտային դիվիզիայի 9-րդ գնդի 2-րդ հրաձգային գումարտակի շտաբի պետ, գվարդիայի ավագ լեյտենանտ Ա. Ի. Հարությունյանը[26]։

Գրոնի գետանցման, նրա աջ ափին հենակետ գրավելու և այն ընդլայնելու համար մղված մարտերում ստորաբաժանումը գերազանց ղեկավարելու փայլուն ունակություններ ցուցաբերեց 6-րդ գվարդիական օդա-դեսանտային դիվիզիայի 14-րդ գնդի 2-րդ հրաձգային գումարտակի հրամանատար, գվարդիայի ավագ լեյտենանտ Ս. Կ. Ազատյանը։ Նա իրեն լավ դրսևորեց նաև մարտի 28-ին՝ Նիտրայի գետանցման և նրա աջ ափին գտնվող Շուրանի քաղաքի դրավման ժամանակ։ Հմտորեն կազմակերպելով կրակային միջոցների փոխգործունեությունը օժանդակ ուժերի հետ, Ս. Կ. Ազատյանի ղեկավարած գումարտակը ճակատային գրոհով ազատագրեց Բրատիսլավա տանող երկաթուղային, գետային և խճուղային ճանապարհների խաչուղում գտնվող փոքրիկ քաղաքը։ Մարտական այդ գործողությունը գերազանց ղեկավարելու համար Ս. Կ. Ազատյանն արժանացավ Ալեքսանդր Նևսկու շքանշանի[27]։

Ապրիլի 4-ին Բրատիսլավայում դեռ փողոցային թեժ մարտեր էին տեղի ունենում։ Հակառակորդը քաղաքի թաղամասերից մեկում ամուր պաշտպանություն էր ստեղծել և կատաղի դիմադրում էր։ Այդ տեղամասում թշնամու դեմ կռվում էին 309-րդ հրաձգային դիվիզիայի 847-րդ հրաձգային գնդի 2-րդ հրաձգային գումարտակի 5-րդ վաշտի մարտիկները՝ կապիտան Վ. Խ. Գրիգորյանցի հրամանատարությամբ։ Մարտի թեժ պահին նա վիրավորվեց, սակայն կռվեց մինչև թաղամասի ազատագրումը։ Այդ մարտում Վ. Խ. Գրիգորյանցի մարտիկները ոչնչացրին 75 և գերեցին 20 հիտլերական, ավար վերցրին զինամթերքով լի 7 ավտոմեքենա, 5 հաստոցային և 3 ձեռքի գնդացիր։ Մարտական առաջադրանքը կատարելիս ցուցաբերած քաջության համար կապիտան Վ. Խ. Գրիգորյանցը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[28]։

Փոքր Դանուբի վրայի կամուրջի գրավման ժամանակ 29 հիտլերական ոչնչացրեց 65-րդ առանձին պատժիչ գումարտակի դասակի հրամանատար,

24 Նույն տեղում, 7-րդ գվարդիական բանակի ֆոնդ, ց. 5339, գ. 262, թ. 294։
25 Նույն տեղում, ֆ. 33, ց. 690306, գ. 1071, թ. 373։
26 Նույն տեղում, գ. 216, թ. 316։
27 Նույն տեղում, ց. 686196, գ. 551, թ. 20։
28 Նույն տեղում, ց. 690306, գ. 216, թ. 334։

գվարդիայի ավագ լեյտենանտ Ն. Հ. Տեր-Օգանեսովը և արժանացավ Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանի[29]։

Բրատիսլավայի համար 7-րդ գվարդիական բանակի մղած մարտերում իրենց ավանդը ներդրեցին նաև 6-րդ գվարդիական ականանետային դիվիզիայի շտաբի պետ, գվարդիայի փոխգնդապետ Մ. Տ. Ավագյանը[30], 303-րդ հրաձգային դիվիզիայի 845-րդ հրաձգային գնդի հրամանատարի պաշտոնակատար, մայոր Հ. Մ. Մանվելյանը[31], 6-րդ օդա-դեսանտային դիվիզիայի հրաձգային գումարտակի հրամանատար, գվարդիայի կապիտան Ս. Ղ. Դավթյանը[32], 27-րդ գվարդիական հրաձգային կորպուսի շտաբի կապի սպա, կապիտան Ս. Ա. Հովհաննիսյանը[33], բժշկական ծառայության մայոր Ն. Պ. Յուղրաշյանը[34], 303-րդ հրաձգային դիվիզիայի 844-րդ հրետանային գնդի հրանոթի նշանառու, կրտսեր սերժանտ Ց. Ա. Նազարեթովը[35], 28-րդ գվարդիական առանձին սակրային գումարտակի սակրավոր, գվարդիայի եֆրեյտոր Մ. Տ. Բաբայանը[36] և շատ ուրիշներ։

Բրատիսլավայի ազատագրման համար մղված մարտերում խիզախորեն կռվեցին նաև 5-րդ օդային բանակի օդաչուները, որոնք մարտական գործողությունների ընթացքում օդից հուսալիորեն պաշտպանում էին ցամաքային ուժերին և գրոհային, կործանիչ ու ռմբարկու հարվածներ հասցնում հակառակորդի ամրություններին, տեխնիկային, կենդանի ուժին։

Բանակում խիզախ օդաչուի համբավ էր ձեռք բերել 3-րդ գվարդիական գրոհային ավիացիոն դիվիզիայի 190-րդ գվարդիական գրոհային ավիագնդի էսկադրիլայի շտուրման և հրամանատարի տեղակալ, գվարդիայի ավագ լեյտենանտ Վ. Ա. Դիզգիզովը։ Նա կատարել էր 145 մարտական թռիչք և թշնամուն պատճառել զգալի կորուստներ։ Բանակի հրամանատարությունը բարձր էր գնահատել գրոհային օդաչուի մարտական հաջողությունները՝ նրան պարգևատրելով Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի, Կարմիր դրոշի 2, Ալեքսանդր Նևսկու 2 շքանշաններով։ Վերջին պարգևը նա ստացավ Բրատիսլավա-Բոնո շրջանում կատարած մարտական 24 թռիչքների ժամանակ ցուցաբերած բացառիկ հմտության, քաջության և արիության համար[37]։

Իրենց թռիչքային վարպետությամբ և մարտերում ցուցաբերած քաջությամբ նաև 48-րդ ռմբակոծիչ ավիագնդի շտուրման, մայոր Ս. Մ. Մարգարյանը[38], 453-րդ ռմբակոծիչ ավիագնդի էսկադրիլայի հրամանատարի տեղակալ, լեյտենանտ Ն. Ս. Դանիելյանը[39], 809-րդ գրոհային ավիագնդի ավիաօղակի հրամանատար, լեյտենանտ Շ. Ս. Մարտիրոսյանը[40], 91-րգ գվարդիա-

---

29 Նույն տեղում, գ. 623, թ. 29։
30 Նույն տեղում, 7-րդ գվարդիական բանակի ֆոնդ, ց. 5339, գ. 162, թ. 461։
31 Նույն տեղում, թ. 450։
32 Նույն տեղում, թ. 570։
33 Նույն տեղում, թ. 158։
34 Նույն տեղում, թ. 384։
35 Նույն տեղում, թ. 320։
36 Նույն տեղում։
37 Նույն տեղում, ֆ. 33, ց. 686196, գ. 647, թ. 209։
38 Նույն տեղում, ց. 690306, գ. 3170, թ. 35։
39 Նույն տեղում, գ. 1938, թ. 188։
40 Նույն տեղում, ց. 686044, գ. 1201, թ. 213։

կան գրոհային ավիագնդի հրաձիգ, գվարդիայի ավագ Ս. Ռ. Բարսեղյանը[41], բանակի հրամանատարի անձնական օդաչու, ավագ լեյտենանտ Հ. Խ. Պարոնյանը[42] և շատ ուրիշներ։ Նրանք մեր բազմազգ հայրենիքի մյուս ժողովուրդների զավակների հետ միասին այդ հերոսական մարտերում փառքով պսակեցին իրենց անունները և արժանի ավանդ ներդրեցին ֆաշիստական զավթիչներից եղբայրական Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայի ազատագրման գործում։

ВОИНЫ АРМЯНЕ В БОЯХ ЗА БРАТИСЛАВУ (25 МАРТА—4 АПРЕЛЯ 1945 Г.)

К. А АРУТЮНЯН

Резюме

С 25 марта по 4 апреля 1945 г. войска Второго Украинского фронта после упорных боев освободили столицу Словакии Братиславу. В частях и соединениях, отличившихся в боях за освобождение Братиславы, наряду с русскими, украинцами, белорусами, грузинами, азербайджанцами, с представителями других национальностей нашей Родины сражались также армяне.

Значительная часть воинов армян участвовала в боях в составе 409-ой стрелковой Кировоградской ордена Богдана Хмельницкого дивизии, 7-ой гвардейской армии. В годы Великой Отечественной войны она прошла боевой путь от предгорьев Кавказа до Чехословакии. За активное участие в освобождении Братиславы дивизия получила наименование Братиславской.

Воины армяне сражались также в других соединениях и частях 7-й гвардейской и 5-ой воздушной армий, Дунайской военной флотилии и тем самым внесли достойный вклад в дело освобождения столицы Словакии г. Братиславы.

---

41 *Նույն տեղում, ց. 690306, գ. 2718, թ. 32։*

42 *Նույն տեղում, գ. 3171, թ. 212։*